

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴԵԳԻԵԳԱԾՍ

ديجيجادو

Հրատարակություն Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀԱՏՈՒՄԾ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՈՒՄՆԻ
«ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆ»Ը ՍՏԵՂԵԿԱԳՈՐԾՈՒԹՅՆԷՆ

Գրիգոր Խանճեանի մասին տեսնել էջ 2

ԽՄԲԱԳԻՐ
Արաքսի Տեղափոխում

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ԳԵՂԱՐՈՒԵՏՏԱԿԱՆ
ՁԵՒԱՒՈՐՈՒՄ
Շահէ Լուսարարեան

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԿՁԸ
Անի Պողոսեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

Թի 45 Նոր Զրջան
ՇՈՎՏԵՄԲԵՐ 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մաշտոցեան Այբուբենի Յաւերժող Ոգին	1
Գրիգոր Խանճեան	2
Ասոյթներ Հայերէնի Մասին	3
Նոր Հրատարակութիւն «Հայ Պարբերական Մամուլի Պատմութիւն» Համադրական Նոր Փորձ մը Տիգրան Գեորգեան	4
Տպաւորութիւններ Հայաստանէն եւ Երեւանի ՀԲԸՄ-ի Ամառնային Վարժողական Ծրագիրէն Արփի Խաչերեան	6
Գահիրէի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐ Մարգարանին Կազմակերպած Մրցաշարքը Սօսի Յակոբեան	9
Մարիամ Մարութեան ՄԱԿ-ի Գեղանկարչական Մրցոյթի Գլխաւոր Մրցանակակիր	11
Հին Հայոց Դպրութեան Տիր Աստուածը	12
Լուրեր Գահիրէի ՀԲԸՄ-էն	
Կրթական	13
Նուիրատուութիւններ	13
Անդամական	15



ՄԱՇՏՈՑԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՅԱԲԵՐԺՈՂ ՈԳԻՆ

Հայկական գիրը աշխարհի հնագույն եւ ինքնատիպ այբուբեններէն մէկն է: Մեսրոպ Մաշտոց զայն ստեղծած է 405 թուականին, անսալով ժամանակի ու պատմութեան թելադրութեան:

Հինգերորդ դարու սկիզբը Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններու արգասիքն էր գիրերու գիտը: Արշակունեաց թագաւորութեան սպասուած մայրամուտին եւ հաւանական վերացման հետեւանքով ստեղծուելիք կացութեան դեմ դնելու համար ի՞նչ բանի պէտք է կառչէր հայ ժողովուրդը: Ո՞րն էր այն լուսաւոր յենասիւնը որուն պիտի կռթներ ան:

Ժողովուրդի մը ազգային դիմագիծը պահելու եւ գոյութիւնը յարատեւ դարձնելու ամենալուսալի գէնքը մայրենի լեզունն է, իսկ մայրենի լեզուն յաւերժական դարձնելու միակ միջոցը՝ ազգային գիրը:

Եւ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը: Հայը սկսաւ կարդալ ու հասկնալ հայերէն: Ոչ մէկ բան կրնար ազգը միաւորել այնպէս, ինչպէս ազգային գիրը:

Մաշտոցեան այբուբենը հնարաւորութիւն տուաւ պատմութեան դաժան ճամբաներով անցնող հայ ժողովուրդին իր հոգեւոր գանձերը փոխանցել մէկ դարէն միւսը, անցեալը կապել ներկային՝ ներկան ապագային հետ:

Հայոց այբուբենը հոգեւոր աւիշ է, որմով ներարկուած են բոլոր հայերը: Հայերէն տառերու գիտին ամենամեծ խորհուրդը այն եղաւ, որ հայ երեխաները յաճախեցին հայկական դպրոց եւ Հայաստանի մէջ օտարալեզու (մասնաւորապէս յունական եւ ասորական) դպրոցները տարածում չգտան: Հայկական դպրոցը հայութիւնը նենգադաւ ձուլումէ պահպանելու ամենավստահելի վահանը դարձաւ:

Հայերէն գրուած առաջին նախադասութիւնը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», կը հաւաստէ, որ հայ ժողովուրդը գրաւոր խօսքի անցած է (իմաստնաբար) իմանալով անոր արժէքը:

Մաշտոցը ստեղծած է 36 տառ, որոնք ամբողջութեամբ կը համապատասխանեն հայ մարդու արտաբերած բոլոր հնչիւններուն: Հայերէնի «ճոխութիւնն ու ճկունութիւնը» ի յայտ եկաւ սկիզբէն, Աստուածաշունչի թարգմանութեան ժամանակ: Հաւանաբար ոչ բոլորս գիտենք, որ Սուրբ Գիրքը աշխարհի բոլոր լեզու-

ներուն մէջ կը կոչուի Պիպլիա եւ միայն հայերէնն է որ ի գորու եղած է ճշգրիտ թարգմանել զայն՝ Աստուածաշունչ:

Լեզուի գեղեցկութեան հետ հայերէն Աստուածաշունչը ունի այլ արժանիք եւս. ան զարմանալիօրէն ճիշտ կ'արտացոլէ բնագիրին միտքն ու ոգին, որուն պատճառով ալ ֆրանսացի նշանաւոր գիտնական Լա Կրոզը Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը համարած է թագուհի բոլոր թարգմանութիւններուն մէջ:

Մաշտոցեան այբուբենով միայն Աստուածաշունչը չէ, որ թարգմանուեցաւ: Հին աշխարհի նշանաւոր հեղինակներու շատ մը գործեր եւս թարգմանուեցան հայերէնի: Այժմ համաշխարհային մշակոյթի շատ մը երկեր, որոնց բնագիրները կորսուած են, պահպանուած են միայն հայերէն թարգմանութեամբ:

Մաշտոցեան այբուբենով ստեղծուեցաւ նաեւ ինքնուրոյն հայկական գրականութիւն եւ գիտութիւն: Հազարազանձ հայերէնով գրուած են մարդկային մտքի փառահեղ շատ կոթողներ, ինչպիսիք են Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն» հանճարեղ երկը, փիլիսոփաներ Եզնիկ Կողբացիի եւ Դաւիթ Անյաղթի երկերը, Գրիգոր Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան» պոէմը, Ներսէս Շնորհալիի եւ Նահապետ Զուլալի անզուգական բանաստեղծութիւնները եւ շատ ու շատ ուրիշներ, նաեւ 19-րդ եւ 20-րդ դարերու մեր մեծ դասականներուն գործերը:

Ներկայիս մարդկութիւնը կը խօսի երկու հազարէ աւելի լեզուներով: Աշխարհի բնակչութեան գրեթէ չորսէն մէկը կը խօսի չինարէն: Մեծ թիւ կը կազմեն անգլերէն, ճաբոներէն, ռուսերէն, սպաներէն, արաբերէն եւ ֆրանսերէն խօսողները: Կենդանի բոլոր լեզուներուն մէջ խօսողներու քանակով հայոց լեզուն 38-րդ տեղը կը գրաւէ:

Մաշտոցեան գիրի ստեղծումէն յետոյ, հայերէն տառերը օգտագործուած են նաեւ իբրեւ թուարժէքներ: Այդ տառ թիւերով ստեղծուած են միջնադարեան Հայաստանի ճշգրիտ գիտութիւններու վերաբերեալ բոլոր գիրքերը: Հայերէն 36 տառերը գրուած են 9-ական տառ պարունակող 4 շարքով, որոնք համապատասխանօրէն կը նշանակեն՝ միաւորներ, տասնաւորներ, հարիւրաւորներ եւ հազարաւորներ:



Ա = 1	Ժ = 10	Ճ = 100	Ռ = 1000
Բ = 2	Ի = 20	Ս = 200	Ս = 2000
Գ = 3	Լ = 30	Յ = 300	Վ = 3000
Դ = 4	Խ = 40	Ն = 400	Տ = 4000
Ե = 5	Ծ = 50	Շ = 500	Ր = 5000
Զ = 6	Կ = 60	Ո = 600	Ց = 6000
Է = 7	Յ = 70	Չ = 700	Ի = 7000
Ը = 8	Ձ = 80	Պ = 800	Փ = 8000
Թ = 9	Ղ = 90	Ջ = 900	Ք = 9000

Այս 36 տառերուն զուգորդմամբ կարելի է գրել 1-9999 բոլոր թիւերը, օրինակ, ծա=51, ողջ=1990, քշղթ=9999:


Յետագային հայկական այբուբենին մէջ ւնեցած «օ» տառը նշանակած է 10.000: Մեծ թիւերու համար հայերէնը ունեցած է յատուկ անուանումներ եւ պայմանանշաններ:

Օրինակ, 10.000 անուանած են բիր եւ նշա-

նակած՝ ^, որ դրուելով տառաթուանշանին վրայ, զայն ւնեցուցած է 10.000 անգամ: Այսպէս՝ ա^=10.000, բ^=20.000, ժ^=100.000, ք^=90.000.000

Քաղուած՝ յապատումներով եւ արեւմտահայերէնի վերածուած՝ Հայկ Խաչատրեանի 1999 թուականին կազմած «Հանրագիտակ Օրացոյց»էն:

«Տ.»



ԳՐԻԳՈՐ ԽԱՆՃԵԱՆ

Հայաստանի Ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանճեան ծնած է Երեւան 1926 թ.: Նկարչական կրթութիւնը ստացած է նախ Փանոս Թէրլէմէզեանի անուան ուսումնարանին, ապա՝ Երեւանի գեղարուեստական ուսումնարանին մէջ:

Ան դափնեկիր է բազմաթիւ Միջազգային, Միութեանական եւ Հանրապետական Մրցանակներու:

Գրիգոր Խանճեան ստեղծագործած է բազմաթիւ գեղանկարներ, նկարազարդած է Յովհաննէս Թումանեանի «Լոռեցի Սագօն», «Մասունցի Դաիթ» պոէմները, Խաչատուր Աբովեանի «Վերք Հայաստանի» վէպը, Պարոյր Սեւակի «Անրեւի Չանգակատուն»ը, Գեորգ Էմինի «Մասունցի Դաիթ»ը եւ այլ գիրքեր:

1981-ին ստեղծած է «Վարդանանք»ը եւ «Հայոց Այբուբեն»ը:



ԱՍՈՅԹՆԵՐ ԸՆՅԵՐԷՆԻ ՄԱՍԻՆ



«Յայտնի է, որ հայ այբուբենը գլուխգործոց մըն է: Հայ հնչաբանական հնչիւններէն իւրաքանչիւրը յատուկ նշանով մը նօթագրուած է եւ այդ համակարգը այնքան լաւ հաստատուած է, որ հայ ազգին հայթաթած է հնչաբանութեան վերջնական արտայայտութիւն մը, արտայայտութիւն, որ պահպանուած է մինչեւ այսօր առանց փոփոխութիւն կրելու: Ատոր հետեւանքով Հայաստան ունեցաւ ճկուն գրական լեզու մը, որ հայուն բառապաշարին բոլոր արժէքները կ'արտաբերէ: Այսպէս կազմուեցաւ գրական լեզու մը, որ ճոխ էր եւ կրնար արտայայտել ամէն ինչ որ յունական լեզուն կարող էր բացատրել: Հայերէն լեզուին ճոխութիւնն ու ճկունութիւնը ուժ մը եղած է հայ ազգին համար»:

«Երբ կազմաւորուած է հայ գրականութիւնը, ժամանակակից եւրոպայի մեծ ազգերէն ոչ մէկը դեռու կար, ոչ Ֆրանսայի մասին խօսք կար, ոչ ալ Անգլիոյ: Հայ ազգային գրական հեղինակութիւնները այնպիսի հնութիւն ունին, որ երկար դարերով կը գերազանցեն եւրոպական ազգերու մեծամասնութեան հեղինակութիւնները: Այն ժամանակաշրջանին, երբ Ֆրանսա անունը նոյնիսկ գոյութիւն չունէր, Հայաստանը մեծ դեր խաղացած է պատմութեան մէջ եւ երբ ֆրանսերէն լեզուն դեռու չէր տարբերել լատիներէնէն, գոյութիւն ունէր հայերէն կարելոր գրականութիւն»:

Ֆրանսացի ականաւոր լեզուաբան Անթուան Մէյէ

«Աստուածաշունչի Ձեր թարգմանութիւնը ասկէ 15 դար առաջ, մէկն է ամենամեծ հոգեկան յաղթանակներէն, զոր երբեւիցէ ժողովուրդ մը կրնայ տարած ըլլալ պատմութեան մէջ»:

Ռումանացի բանասէր Նիկոլա Եորգա

«...Սեր նախնիները մեզ եւ աշխարհին փոքր ժառանգութիւն չեն կտակել: Բայց մենք պիտի հասկանանք եւ հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր ժառանգութեան մեծագոյն գանձը մեր լեզունն է: Գալով անյիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփուելով բազում ազգերի լեզուներին՝ հայոց լեզուն մի իւրատեսակ հանրագիտարան է անյիշելի ժամանակների, բազում դարերի եւ բազմաթիւ այլ ազգերի: Այսպէս դատելով՝ մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլ աշխարհին. նա միայն մեր սրբութիւնը չէ, այլ մասունքը հանուր մարդկութեան...»

Այդ լեզուի խնամքը, նրա անաղարտութիւնն ու պաշտպանութիւնը դրուած է մեր վրայ»:

Պարոյր Սեւակ

«Հայոց լեզուն հարուստ լեզու է եւ կ'արժէ որ մարդ չարչարուի զայն սորվելու համար: Ես ջանք կը թափեմ եւ կը շարունակեմ զայն ուսումնասիրել...»:

Պայրըն

ՄԻԱԿ ՄԱՅՐԵՆԻՆ

Լեզուներ գիտես,
գիտես իմացիր.
Եւ ո՞վ չի ուզում,
Բայց հասկանո՞ւմ ես ի՞նչն է ինձ յուզում.
Աւա՛ղ, համր ես դու,
քանզի չգիտես միայն մայրենին՝
Ըն հայոց լեզուն:

Գուցէ կարծում ես այդ միեւնո՞յնն է,
Բայց ինձ թում է
Արար աշխարհը
Զեզ համար միայն թարգմանութիւնն է...

Միքայէլ Յարութիւնեան
1967




«ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ ՄԸ

Ընթերցողին ներկայացնող հատորը՝ երկարատև, հետևողական տքնաչան հետազոտություններու արդիւնք է, ամփոփուած միջին մեծութեամբ 701 էջերով գիրքի մը մէջ:

Սրտագրաւ երեւոյթ պետք է բնորոշել՝ հայրենի գիտական շրջանակներուն եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի միջեւ հաստատուած վերջին տարիներու սերտ գործակցութիւնը, որուն վերջին իրագործումը եղաւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Գիտական Խորհուրդին որոշումով ներկայացուած եւ «Սաթենիկ Ճ. Չագըր Հիմնադրամ»-ին նիւթական միջոցներով տպագրուած «ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ԺԸ.-ԺԹ. ԴԱՐԵՐ», Հատոր 1-ը, 2006 թ., ՆՈՒՊԱՐ Տպագրատունէն:



ծայած է «Պատմութիւն Հայ Լրագրութեան 1860-Էն Մինչեւ Մեր Օրերը» ուսումնասիրութեան շարունակութիւնը:

Ասոր յաջորդած է 1909 թ. Վենետիկի մէջ լոյս տեսած բանասեր Հ. Մկրտիչ Վրդ. Պօտուրեանի «Հայ Մամուլը Տասնեւհինգ Տարուան Մէջ» ամփոփ աշխատասիրութիւնը:

Առաջին անգամ հայ հրապարակախօսութիւնը գիտական ուսումնասիրութեան առարկայ կը դառնայ շնորհիւ պատմաբան Լեւ-ի, երբ 1902 թ., Թիֆլիսի մէջ կ'անդրադառնայ հրապարակախօս-լրագրող «Ստեփանոս Նազարեանց»-ի, ապա՝ 1902-1905 թթ., երեք հատորով կը ներկայացնէ «Գրիգոր Արծրունի»-ն:

Աւելի ուշ, 1955-1956 թթ., Երեւանի մէջ ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեան «Նալբանդեան եւ նրա ժամանակը» երկհատորեակով ներկայացուց հայ հասարակական միտքին քննական պատմութիւնը:

Ակադեմիկոս Արտաշէս Կարինեանի երկհատոր «Ակնարկներ Հայ Պարբերական Մամուլի Պատմութեան»-ը (Ե. 1956, 1960) առիթ եղաւ որ հայ պարբերական մամուլի պատմութիւնը գիտական հիմքերու վրայ դնելու աշխատանքներուն ձեռնարկուի եւ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային մէջ հիմը դրուի հայ մամուլի պատմութեան բաժնին, եւ ապա՝ հայ մամուլի եւ հասարակական միտքի պատմութեան բաժնին, նպատակ ունենալով կազմել պարբերական մամուլի մատենագիտական նոր ցուցակ մը եւ իւրաքանչիւր պարբերականի մասին ալ՝ մենագրական ուսումնասիրութիւն մը: Մենագրութիւնները բազմաթիւ ըլլալուն՝ կարելի չէ թուարկումը կատարել, բայց 1986 թ., Մանուէլ Բաբլոյեան յաջողեցաւ ներկայացնել իր ճշգրտած «Հայ Պարբերական Մամուլը»:

Պարբերական մամուլի մատենագիտութեան նախորդ երախտաւորները եղած են՝ Գարեգին Լեւոնեան, Ալ-պոլ՝ 1895, Ե. 1934, Յովհաննէս Պետրոսեան՝ Ե. 1954, 1956, 1957 եւ Ամալիա Կիրակոսեան՝ Ե. 1970:

Վերեւ նշուած խմբագիրներէն զատ, այս հատորին իրենց աշխատակցութիւնը բերած են նաեւ այլ ծանօթ բանասերներ ալ, որոնք խելամիտ կերպով աշխատասիրութիւնը բաժնած են երեք մասերու.

ԱՌԱԶԻՆ ՄԱՍ, Հայ պարբերական մամուլին

Որպէս «Պատմութիւն» շատ ամփոփ բնութագրումով ներկայացուած են միայն հայ լրագրութեան առաջին հարիւրամեակին աւելի ուշագրաւ պարբերականները եւ միաժամանակ ալ բացայայտուած են անոնց գրաւած դիրքն ու դերը իրենց ժամանակին հայ հասարակական միտքի պատմութեան մէջ:

Այստեղ կ'ուզեմ անմիջապէս վկայակոչել խմբագիրներուն (պատմական գիտութիւններու դր-ներ՝ Ա. Ա. Խարատեան, Լ.Ս. Գեորգեան, բանասիրական գիտութիւններու թեկնածու Մ. Հ. Մխիթարեան) շատ անկեղծ խոստովանութիւնը՝ թէ «Չնայած հայ հասարակական-քաղաքական կեանքին բերած վիթխարի նպաստին եւ երկդարեայ պատկառելի պատմութեան, հայ լրագրութեան ամբողջական պատմութիւնը դեռեւս չի ստեղծուել», էջ 16:

Որպէսզի հետաքրքրասեր ընթերցողը գոնէ տարտամ գաղափար մը ունենայ, շատ համառօտակի, ժամանակի կարգով կը ներկայացնեմ կարելոր ուսումնասիրութիւններու ընթացքը:

Հայ մամուլի պատմագրութեան առաջին փորձը՝ «Հայ Մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի Մէջ», 1878 թ. Թիֆլիսի մէջ կատարած է բանասեր Յարոն:

Հայ մամուլի «բազմահմուտ պատմաբան» կը նկատուի իրաւամբ վիեննական Մխիթարեան Միաբանութեան անդամ Հ. Գրիգորիս Վրդ. Գալեմբերեանը, որ 1893 թ. առանձին հատորով հրատարակած է «Պատմութիւն Հայ Լրագրութեան Ի Սկզբանէ Մինչեւ Մեր Ժամանակը». յետագային՝ «Հանդէս Ամսօրեայ»-ի 1897 թ. 2,4,9 համարներուն մէջ լոյս ըն-



սկզբնաւորումը եւ զարգացումը ժժ. դարու առաջին կէսին:

Գլուխ Առաջին, Զնդկահայ պարբերական մամուլը՝ Ազդարար, Շտեմարան, Ազգասեր, Ազգասեր Արարատեան, Ուսումնասեր, Եղբայրասեր:

Գլուխ Երկրորդ, Միխթարեաններու պարբերական հրատարակութիւնները՝ Տարեգրութիւն, Եղանակ Բիւզանդեան, Դիտակ Բիւզանդեան, ԲազմաՎէպ, Երոպա, Զանդէս Ամսօրեայ:

Գլուխ Երրորդ, Արեւելահայ մամուլի սկզբնաւորումը՝ Արեւելեան Ծանուցմունք, Կովկաս, Արարատ:

Գլուխ Չորրորդ, Պոլսահայ մամուլը՝ Լրոյ Գիր, Ազդարար Բիւզանդեան, Զայաստան, Նոյեան Աղանի, Բանասեր, Ընտանի Իմաստասեր, Մուսայք Մասեաց:

Գլուխ Զինգերորդ, Չմիւռնահայ մամուլը՝ Շտեմարան Պիտանի Գիտելեաց, Արշալոյս Արարատեան, Զայրենասեր, Արփի Արարատեան:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ, Զայ պարբերական մամուլը ժժ. դարու 50-60-ական թուականներուն:

Գլուխ Առաջին, Արեւելահայ մամուլը՝ Զիւսիսափայլ, Մեղու Զայաստանի, Ճռաքաղ, Մասեաց Աղանի, Կռունկ Զայոց Աշխարհին, Զայկական Աշխարհ:

Գլուխ Երկրորդ, Արեւմտահայ մամուլը՝ Մասիս, Մեղու, Միութիւն, Միութիւն Սահմանադրական, Ծաղիկ, Արծուի Վասպուրականի, Արծուիկ Տարօնոյ:

Գլուխ Երրորդ, Երոպայում լոյս տեսած պարբերականներ՝ Արեւելք, Արեւմուտք, Փարիզ, Երկրագունդ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ, Զայ պարբերական մամուլը ժժ. դարու վերջին երեսնամեակին:

Գլուխ Առաջին, Զայ ազատամիտ մամուլը՝ Մշակ, Մուրճ:

Գլուխ Երկրորդ, Ազգային-պահպանողական պարբերականները՝ Մեղու Զայաստանի, Փորձ, Արծագանք, Նոր-Դար, Արարատ:

Գլուխ Երրորդ, Զայ մամուլը Երեւանում՝ Պսակ, Երեւանի Յայտարարութիւններ, Առողջապահական Թերթ:

Գլուխ Չորրորդ, Արեւմտահայ մամուլը՝ Արեւելեան Մամուլ, Արեւելք, Զայրենիք:

Գլուխ Զինգերորդ, Արեւմտահայ երգիծական մամուլը՝ Մեղու, Թատրոն, Թատրոն Բարեկամ Մանկանց, Լոյս, Ծիծաղ, Խիկար:

Գլուխ Վեցերորդ, Զայ մանկապատանեկան մամուլը՝ Դպրոց, Մանկավարժական Թերթ, Վարժարան, Մանկավարժանոց:

Գլուխ Եօթներորդ, Զայ մանկապատանեկան մամուլը՝ Բուրաստան, Սուրբ Սահակեան, Թութակ Զայկագեան, Երկասեր, Երկրագունդ, Աւետաբեր Տղայոց Զամար, Բուրաստան Մանկանց, Ծաղիկ Մանկանց, Աղբիւր:

Գլուխ Ութերորդ, Զայատառ թրքերէն մամուլը:

Գլուխ Իններորդ, Զայ ազգային կուսակցութիւններու մամուլին սկզբնաւորումը՝ Արմենիա, Զնչակ, Դրօշակ:

Գլուխ Տասներորդ, Դեմոկրատական այլ հրատարակութիւններ՝ Ազատութեան Աւետաբեր, Զամայնք, Աշխատանք, Ազատ Զայաստան:

Ներկայացուած հայ պարբերականներէն առաջ, Զնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ սկիզբ առած է հայ քաղաքական հրապարակախօսութիւնը՝ Մովսէս Բաղրամեանի «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ» հատորով, 1772 թ., ապա՝ 1783 թ., Նոր Ջուղայեցի մեծահարուստ վաճառական Շահամիր Շահամիրեանի «Տետրակ, որ կոչի Նշաւակ, վասն կառավարելոյ ինչս Որբոց եւ առանց կտակ Ննչեցելոց» կանոնադրութեամբ:

Զայ լրագրութեան եւ հրապարակագրութեան հիմնադիրները եղած են շատ յատկանշական կերպով՝ քահանայ հայրեր, վարդապետներ, եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ եւ բողոքական պատուելիներ. յիշատակելու համար մէկ քանին՝ Յարութիւն Զիյ. Շմաւոնեան, Զ. Ղուկաս Վրդ. Ինճիճեան, Զ. Գաբրիէլ Վրդ. Այվազովսկի, Զ. Վարդան Ըստկարեան, Գաբրիէլ Զիյ. Պատկանեան, Խորէն Վրդ. Ստեփանէ, Խրիմեան Զայրիկ, Գարեգին Վրդ. Սրուանձտեանց եւ ուրիշներ:

Նկատելով որ «**ՊՍՏՈՒԹԻՒՆ**»-ը նախատեսուած է «պատմաբաններու» եւ «հայ մամուլի պատմութեամբ հետաքրքրուողներու» համար, անհրաժեշտ կը նկատուի անձնանուններու եւ տեղանուններու ցանկերը՝ որոնումները դիւրացնելու համար, եւ ժամանակակից թեքնիք դիւրութիւններն ալ օգտագործելով՝ կարելի էր մանրացուած պատճեններն ալ ներկայացնել ամէն մէկուն, հատորին այնքան հետաքրքրական տեղեկութիւններուն ընթերցումը աւելի հաճելի դարձնելու մտադրութեամբ:

Աւելորդ չեմ նկատեր յիշատակել՝ թէ ԶԲԸՄ-ի գործակցութիւնը հայրենի կառավարութեան հետ Նոր չէ. եգիպտահայ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրներուն կտակին շնորհիւ, ԱՐՄՖԱՆ-ի ղեկավարութեամբ՝ Մելքոնեան Զրատարակչական Ֆոնտով, Երեւանի մէջ լոյս տեսած են երկու տասնեակէ աւելի հայագիտական ծանրակշիռ հատորներ, այն ժամանակուան երկրին եւ յատկապէս տպարանական անձուկ պայմաններով, սակայն բոլորն ալ տպագրական շքեղ երեւոյթով:

Այսօր, թէւ պարագայական կերպով միայն, Գահիրէի ԶԲԸՄ-ը դարձեալ կ'աջակցի հայրենի գիտական միտքին լոյս աշխարհ գալուն, շնորհիւ դարձեալ չգերազանցուած եգիպտահայ բարերարուհի Սաթենիկ Ճ. Չագըրի կտակին ընձեռած նիւթական անսահման կարելիութիւններուն:

Տիգրան Գեորգեան



ՏՊԱԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸԱՅԱՍՏԱՆԵՆ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԴԲԸՄ-Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԵՆ

Եգիպտացիները միշտ կը գիտնան որ ես տեղացի չեմ առանց իսկ խօսելու: Օտար հով մը ունիս կ'ըսեն: Երբեմն ստիպուած կ'ըսեմ որ եգիպտացի եմ, որպէսզի խօսքը չերկարեմ: Զարիւրաւոր անգամներ ստիպուած եղած եմ իրենց մեր պատմութիւնը պատմել: Շատ անգամ ալ սխալ կը հասկնան: Զայն, եւ գերմանացին կը շփոթեն իրարու հետ, 'Ալմանի' եւ 'Արմանի', եւ միշտ կ'ենթադրեն, թէ Զայաստան ծնած եմ կամ Զայաստանի հպատակութիւն ունիմ:

Միշտ կը հարցնեն թէ քանի՞ տարին անգամ մը Զայաստան կ'երթամ: Մինչդեռ ես, մինչեւ այս տարի Զայաստան չէի գացած եւ շիտակը շատ ալ չէի փափաքեր երթալ: Անցեալ տարի երբ ԴԲԸՄ-ի New York Summer Intern Program-ին մասնակցեցայ, ընկերներով որոշեցինք 2007-ի ամառը հանդիպիլ Զայաստանի մէջ: Ի հարկէ մեզմէ քիչեր այս որոշումին հետեւեցան, բայց ես շատ քաջալերուեցայ որ երթամ: Գահիրէի ԴԲԸՄ-ին կողմէն e-mail մը ստացայ որը կը տեղեկացներ ԴԲԸՄ-ի Երեւանի մէջ կայանալիք նոր Internship-ի ծրագրին մասին, որ Նիւ Եորքի եւ Փարիզի ծրագիրներուն նման պիտի ըլլար: Դիմումս ուղարկեցի ԴԲԸՄ-ի Նիւ Եորքի Կեդրոնը:

Զայաստան ճանապարհիս ընթացքին ճիշդ ինչ զգացումներ ունեցայ շատ լաւ չեմ յիշեր: Խանդավառուած էի, սակայն քիչ մըն ալ մտահոգ: Զայաստանի մասին ամեն մարդ տարբեր կարծիք ունի: Ոմանք այնտեղ լաւ ժամանակ անցուցած են, ուրիշներ վատ: Յուզիչ զգացումներ չունեի որ հայրենիքս կ'երթամ, աւելի պարզ ձեւով առած էի այս խնդիրը: Մեծ ակնկալութիւններ չունեի: Երբ երեւակայեցի, «դրախտային», «երազային» Զայաստան մը, կրնանք յուսահատիլ եւ յուսախաբ ըլլալ:

Երեւանի Չուարթընգ օդակայանը մեզ շատ

ազնուօրէն դիմաւորեցին ԴԲԸՄ-ի Երեւանի գրասենեակէն տիկին Շուշանիկ Ղալթախճեանը եւ ԴԲԸՄ-ի վարորդը: Ուրիշ մասնակից մը

Միացեալ Նահանգներէն եւ ես Կիեննայէն միեւնոյն օդանաւով ժամանեցինք Երեւան առաւօտեան ժամը 5-ին, երեքշաբթի Յուլիս 4-ին:

Մասնակիցներս ծրագրին հինգ շաբթուան ընթացքին Երեւանի Պետական Զամալսարանի հանրակացարանին մէջ մնացինք: Շաբթու ընթացքին առաւօտները մեր internship-ին կ'երթայինք, իրիկունները՝ զուար-

ճանալու եւ կամ պաշտօնական այլ ծրագիրներու:

ԴԲԸՄ-ի (YSIP) Երեւանի Ամառնային Վարժողական Ծրագրին (ԵՎՎԾ) յայտագրին մասնակիցներս թիւով 16 էինք, ժամանած Միացեալ Նահանգներէն, Գանատայէն, Ռումանիայէն եւ ինքս՝ Եգիպտոսէն: Մասնակիցներէն ամեն մէկս տարբեր, ճանչցուած հայկական կամ միջազգային կազմակերպութեան մը մէջ կատարեցինք մեր internship-ները, համաձայն մեր մասնագիտութիւններուն: Ոմանք Արտաքին Գործոց Նախարարութեան, ուրիշներ Ազգային Ժողովի, Զայաստանի Ամերիկեան Զամալսարանի, Կեդրոնական Դրամատան, Գաֆէսճեան թանգարանի հիմնարկին եւ կամ այլ առողջապահական կազմակերպութիւններուն մէջ պարապեցանք:

Ինքս, առաջին երկու շաբաթը մարզուեցայ Լիզուոր Դեղագործարանին մէջ եւ մնացեալ ժամանակը անցուցի Դեղի եւ Բժշկական Տեխնոլոգիաների Փորձագիտական Կեդրոնին մէջ: Լիզուոր Դեղագործարանը հականեխումի դեղեր կ'արտադրէ Զայաստանի եւ այլ ԱՊՀ (Անկախ Պետութիւններու Զամալսարան) երկիրներուն համար: Լիզուոր հիմնուած է 1991-ին, Զանրապետական Զիւանդանոցին կողքին: Ներկայիս



ԴԲԸՄ-ի Երեւանի Ամառնային Վարժողական Ծրագրին մասնակիցները կեդրոնը ոտքի՝ Արփի հաչերեան



ծրագիր կայ Լիգուորը փոխադրել ավելի ընդարձակ հողամասի մը վրայ: Այսպիսով գործարանը ավելի լայն կարելիություններ պիտի ունենայ մեծնալու: Իսկ Փորձագիտական Կեդրոնը, հիմնուած է 1992-ին: Այնտեղ դեղորայքի փորձաքննություն եւ գնահատում կը կատարուի: Զոն կը քննեն դեղերու ազդեցութիւնը եւ անվտանգութիւնը, նաեւ դեղագործարաններու եւ դեղատուներու (դեղարաններու) մակարդակը:

Ամեն շաբթու սկիզբին, պաշտօնատարներէն մի քանի հոգի գեկուցում կը պատրաստեն եւ կը ներկացնեն տնօրէնին՝ Բժշկական Գիտություններու Դոկտոր Պրոֆէսոր Էմիլ Սամսոնի Գաբրիէլեանին եւ պաշտօնակիցներուն: Չեկուցումէն ետք, ներկաները կը քննարկեն նիւթը: Իմ գործի ղեկավարս, Տիկին Ուրսուլա Պօղոսեան, առիթ տուաւ ինծի որ գեկուցով հանդէս գամ: Նիւթ մը ներկայացուցի որ ֆրանսերէնէ հայերէնի թարգմանեցի, Diclofenac-ի ազդեցութիւնը անկողներու (vultures) վրայ: Անգամ մը Կեդրոնի քննիչին հետ այցելեցի Արփիմետ Դեղորայքի գործատունը որ Երեւանէն դուրս Կոտայքի Մարզին մէջ կը գտնուի: Internship-ս Փորձագիտական Կեդրոնի տարրալուծարանին մէջ ալ անցուցի: Դեղերու վրայ փորձեր կատարեցինք ժամանակակից ձեւերով ու գործիքներով:

ԵԱՎԾ-ի ծրագիրը բաւական լեցուն եր: Internship-էն զատ երեկոները շաբաթը երկու անգամ արեւելահայերէնի դասընթացք ունեինք եւ շաբաթը անգամ մըն ալ հայկական պարի՝ ժամ 6.30-էն 8.00: Վերջին շաբաթը Նորքի Զայրոդաց Տան պարի աշակերտութեան հետ ելոյթ ունեցանք եւ ժողովուրդը ներկայ եղաւ մեր հանդէսին: Արեւելահայերէնի մեր դաստիարակներն էին տիկին Անահիտ Աւետիսեանը եւ իր դուստրը Անին: Իսկ մեր պարուսույցներն էին Նելլին եւ Արմանը: Ատոնցմէ զատ ունեցանք պաշտօնական ճաշկերոյթներ, ինչպէս բարիգալուստի ճաշկերոյթը, վերահսկիչի ճաշկերոյթը, տիար Պերճ Սեդրակնեանի պատուին ճաշկերոյթը եւ ողջերթի ճաշկերոյթը: Վերահսկիչի ճաշկերոյթին ներկայ եղան Լիգուորի տնօրէն տիար Սեր-

կէ Մաթեոսեանը եւ տիկին Գայեանէ Պեպանեանը՝ իմ անմիջական ղեկավարս: ԵԱՎԾ-ի մասնակիցներս ներկայ եղանք Զայաստանի Ֆիլիարմոնիք Նուագախումբի համերգին, որ կատարուեցաւ որպէս հոգեհանգիստ ԶԲԸՄ-ի Բարերար Ալեք եւ Մարի Մանուկեաններու, անոնց աճիւններուն Տիգրայէն Էջմիածին փոխադրութեան առթիւ: Ծրագրի ընթացքին հայոց պատմութեան նիւթով երկու դասախօսություններու ներկայ եղանք, առաջինը Աշոտ Մելքոնեանի, երկրորդը՝ Զայկ Տեմոյեանի կողմէ ներկայացուած:



Վարժողական Ծրագրին մասնակիցները Էջմիածինի մէջ

Նոյնպէս մեզ ընդունեց Զայաստանի Արտագին Գործոց Փոխ Լախարար տիար Արմեն Բայբուրդեանը: Ան մեզի հետ քննարկեց Զայաստանի յարաբերությունները Միացեալ Նահանգներու, Եւրոմիութեան երկիրներու

եւ այլ երկիրներու հետ:

եւ այլ երկիրներու հետ:

Վերոյիշեալ աշխատանքներէն ետք երբ ժամանակ գտնեինք, Երեւանի փողոցներուն մէջ կը զբօսնէինք: Շաբաթավերջի արձակուրդներուն, Երեւանէն դուրս պտոյտներու կ'երթայինք: Առաջին արձակուրդին Գառնի, Գեղարդ, Սուրբ Էջմիածին, Սուրբ Զնիփսիմէ, Չուարթսոնց եւ այլ վանքեր այցելեցինք:

Երկրորդ շաբաթավերջին, Սեւան եւ Դիլիջան գացինք: Դիլիջանի մէջ գիշերեցինք «Կոմպոզիտորների Տուն»ը, ուր Արամ Խաչատուրեան, Առնո Պապաջանեան եւ այլ երաժիշտներ հանգիստի կ'երթային, կը ներշնչուէին այդտեղի անտառային եւ լեռնային գեղեցիկ միջավայրէն ու կը ստեղծագործէին: Ներկայիս Կոմպոզիտորների Տան տնօրէնը Ռոպերդ Ամիրխանեանն է: Զանդիպեցանք իրեն եւ ան մեզի համար համերգ մը կազմակերպեց:

Երրորդ շաբաթավերջին թանգարաններ եւ զբօսայգիներ այցելեցինք եւ ուղղուեցանք դէպի Ղարաբաղ: Մեր ճամբուն վրայ Խոր Վիրապը, Արարատը եւ Մասիսը տեսանք, ինչպէս նաեւ Նորավանքը, Արենի գիւղը, Լաչինի անցքը եւ Գորիս քաղաքը:



Գիշերով Ստեփանակերտ հասանք եւ Նայիրի Զիրանցը գիշերեցինք: Առաւօտուն, ԶԲԸՄ-ի վերակառուցած Նորաշէն գիւղը գացինք: Աղտամէն եւ Ֆիզուլիէն անցանք եւ երկար ժամանակ յետոյ հասանք փոքր գիւղ մը Ատրպէյճանի սահմանին մօտ, որը Նորաշէն էր: Գիւղապետին հետ հանդիպեցանք: Ինքը մեզի ցոյց տուաւ գիւղին դպրոցը եւ դարմանատունը: Նկատեցի թէ դպրոցին համակարգիչներու սենեակին սարքաւորումներուն ծախսերուն մասնակցած է նաեւ Եգիպտոսի ԶԲԸՄ-ը: Գիւղացիներուն հետ զբոսեցանք եւ մեզ իրենց տուները հրաւիրեցին: Գիւղապետին հարցուցի թէ ինք Ղարաբաղի՞ է: Ըսաւ, թէ ինք ծնունդով Սեւանէն է սակայն այս վերաբնակութեան ծրագիրին մէջ առաջնահերթութիւն կու տան բազմազան երիտասարդ ընտանիքներուն:



Վարժողական Ծրագիրին մասնակիցները դասապահի ընթացքին

Նորաշէնէն վար ուրիշ գիւղ մը կայ որը մօտ օրէն ԶԲԸՄ-ի հովանաւորութիւնը պիտի վայելէ որուն անունը Բարեշէն է: Այնտեղ հանդիպեցանք տարեց գիւղացիի մը, Գիւմրիէն, որը 16 տարի է կը սպասէ այս գիւղի վերանորոգման: Ինք իր անձնական միջոցներով այգի մը տնկած է:

Վերադարձին անելի հարթ ճամբայ մը առինք: Այս ձեւով Ստեփանակերտ հասանք անելի արագ: Ճաշեցինք ու շուտ մը քաղաքը այցելեցինք հասնելու Ղարաբաղի Զանրապետութեան Ազգային Ժողովի նախագահին՝ տիար Աշոտ Կիւլեանի հետ մեր ժամադրութեան: Ան մեզ ընդունեց եւ մեզի հետ քննարկեց Ղարաբաղի տնտեսական, մշակութային, քաղաքական վիճակը եւ ապագան: Տիար Կիւլեանը շեշտեց Սփիւռքի ներդրումին կարեւորութիւնը: Նոյնպէս ան անդրադարձաւ նախագահական մաքուր ընտրութիւններ կատարելու անհրաժեշտութեան: Ըսաւ թէ կարելոր է, համայն աշխարհին ցոյց տալու համար թէ Ղարաբաղցիները կարող են ինքզինքնին կառավարել: «Այս ձեւի ընտրութիւններ Ղարաբաղի համաշխարհային ճանաչման կ'օգնեն» անելցուց ան:

Մեր հանդիպումէն ետք դէպի Շուշի ուղղուե-

ցանք ուր Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ Եկեղեցին եւ Շուշիի Մզկիթը տեսանք: Գիշերը Birthlight Armenia-ի intern-ներուն հետ «քէֆի» գացինք «Սարօ» պատերազմի հերոսին տունը: Մեզի թուրքի օդի եւ խորոված հիւրասիրեցին եւ գիշերը պարելով ու ուրախութեամբ անցուցինք:

Կիրակի առտու կանուխ Մարտակերտի շրջանի Գանձասարի Վանքը այցելեցինք եւ Վանք գիւղէն անցանք: Տատիկին եւ Պապիկին յուշարձանին մօտ լուսանկարեցանք եւ դէպի Երեւան վերադարձանք:

Չորրորդ շաբաթավերջին, Շաբաթ օրը Երեւան անցուցինք: ԶԲԸՄ-ի Երեւանի ծրագիրներէն մի քանի հատը այցելեցինք ինչպէս AUA (Հայաստանի Ամերիկեան Համալսարան), Radiology-ի կեդրոնը եւ ԶԲԸՄ-ի Հայաստանի կեդրոնը: Տեսնուեցանք տիար Աշոտ Ղազարեանի հետ, որ կեդրոնի տնօրէնն է:

Կիրակի օրը, Աշտարակի Կարմրաւոր Եկեղեցի-դամբարանը այցելեցինք ուրկէ ուղղուեցանք Հայաստանի երկրորդ քաղաքը՝ Գիւմրի: Գիւմրիի մէջ ճաշեցինք, ապա քաղաքի տեսարժան վայրերը եւ մանկատուն (որբանոց) մը այցելեցինք:

Մեր վերջին շաբաթավերջը անելի հանդարտ անցաւ: Շաբաթ Օգոստոս 4-ի երեկոյեան ողջերթի ընթրիք կար որմէ ետք վարժողական ծրագրին մասնակիցները սկսան մէկ առ մէկ հրաժեշտ տալ իրարու եւ Հայաստանին:

Թէեւ ԵԱՎԾ-ի ծրագիրը բաւական խճողուած էր, սակայն շատ լաւ կազմակերպուած էր, հակառակ առաջինը ըլլալուն Երեւանի մէջ, շնորհիւ Շուշանիկ Ղալթախճեանի եւ Թամար Շահապեանի ջանքերուն: Այս ծրագիրին միջոցով մօտէն ճանչցայ Հայաստանը եւ հայաստանցին: Ծանօթացայ մեր երկրին կարիքներուն եւ կարելիութիւններուն, ինչպէս նաեւ դրական եւ բացասական կողմերուն:

Վերջապէս ճանչցայ եւ սիրեցի մեր երկիրը ինչպէս որ է, եւ այժմ կրնամ անելի հաստատ պատասխանել ընկերներուս հարցումներուն:

Արփի Խաչերեան



ԳԱՇԻՐԵԻ ՇՄԸՄ ՆՈՒՊԱՐ ՄԱՐԶԱՐԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՊԱՍՔԵԹ ՊՈԼԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Եգիպտոսի 6 Հոկտեմբերի յաղթանակին 34-րդ տարեդարձին առիթով, այս տարի եւս Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը կազմակերպած էր պասքէթ պոլի մրցաշարք, Շաբաթ 6 եւ Կիրակի 7 Հոկտեմբերին:

Այս մրցաշարքը հովանաւորութիւնը կը վայելէր Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանին եւ նախագահութիւնը՝ Տէր եւ Տիկին Անդրանիկ Մեսրոպեաններու:

Մրցաշարքին կը մասնակցէին Աղեքսանդրիայէն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց եւ աղջկանց եւ ԿԱՄՔԻ տղոց խումբերը, իսկ Գահիրէէն Ս. ԹԵՐԷԶԱՅԻ տղոց եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց եւ աղջկանց խումբերը:

Այս տարի Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կրտսերներու տղոց խումբը իր մասնակցութիւնը բերաւ մրցելով Զուհուր խումբին հետ:

Մրցաշարքին առաջին մրցումը տեղի ունեցաւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրեի եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Աղեքսանդրիոյ կրտսեր աղջիկներու խումբերուն միջեւ:

Գնահատելի էր տեսնել ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Աղեքսանդրիոյ վարչութեան տարած աշխատանքը կազմելու ու պահելու կրտսեր աղջիկներու խումբ մը, հակառակ գաղութին սակաւաթիւ ըլլալուն: Մրցող խումբերուն կարողութիւնը անհասարար էր:

Գահիրեի աղջիկները իրենց ինքնավստահ ու արագ խաղով յաղթեցին ու տիրացան Տէր եւ Տիկին Լեւոն Նիկոլեաններու նուիրած բաժակին: Մաղթենք որ Աղեքսանդրիոյ խումբը յառաջիկային ձեռք կը բերէ աւելի բարձր մակարդակ:

Օրուան երկրորդ մրցումը տե-



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթպոլի խումբը եւ փոքրիկները

ղի ունեցաւ ՀՄԸՄ ԿԱՄՔԻ եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց խումբերուն միջեւ: Հակառակ որ սկիզբը մրցումը բաւական հաւասարակշռուած էր, սակայն աւելի ուշ, ԿԱՄՔԻ տղաքը իրենց ճարպիկ խաղարկութեամբ յաղթական հանդիսացան:

Օրուան վերջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրեի եւ Ս. ԹԵՐԷԶԱ խումբերուն միջեւ էր:

Ուրախալի էր տեսնել որ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը մրցումին գրեթէ ամբողջ տեսողութեան կը խաղար իր պատանի՝ այսինքն 21 տարեկանէն վար մարզիկներով: Այս անգամ, պահեստի մարզիկներուն տրամադրուած նստարաններուն վրայ, քիչ մը մտահոգ հայեացքով, նըստած էին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երեց տղաքը, իսկ դաշտը զարդարուած էր նորահաս սերունդով: Ո՞ր խումբը կրնայ տոկալ լաւ մարզուած, խանդավառ ու բարձր կարողութեամբ օժտուած խումբի մը դէմ:

Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ



ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ պոլի խումբը բաժակը ստանալէն ետք



Վիոլյանները ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչություն և բարեկամներուն հետ


պատուաբեր արդիւնքով մը յաղթական հանդիսացաւ այս մրցումին:

Կիրակի օրուան առաջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կրտսեր տղոց եւ Ջուհուրի խումբին դէմ էր: Լաւ խաղարկութենէ մը ետք, որուն ընթացքին խումբին ամենափոքրիկ մարզիկներն անգամ առիթը ունեցան դաշտ իջնելու, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը յաղթեցին ու տիրացան Տոթթ. եւ Տիկին Հրայր Տրդատեաններու նուիրած բաժակին:

Աւարտական մրցումը Շարաթ օրուան երկու յաղթական՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրէ եւ ՀՄԸՄ ԿԱՄՔ խումբերուն միջեւ էր:

Հետաքրքրական ու մաքուր խաղարկութենէ մը ետք ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրէի մարզիկները յաղթեցին ու տիրացան մրցաշարքի բաժակին որ նուիրուած էր տէր եւ տիկին Օննիկ Պըլքատանեաններու կողմէ: Մրցաշարքի բոլոր մետալները նուիրուած էին, ինչպէս միշտ, տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեանները:

Մրցումին աւարտին մի քանի վայրկեանի ընթացքին ամպիոն մը տեղադրուեցաւ դաշտին մէջտեղը, որուն վրայ յաղթական մարզիկները շարունակաբար ու յաղթանակի երգերով ու արձակուած փայլուն թղթիկներու տարափին տակ բաժակն ի ձեռին յիշատակի լուսանկարներ



Տոթթ. Կարօ Աբգարեան ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յուշանուէրը կը յանձնէ տոթթ. Վիգէն Ճիգմէճեանին

նկարուեցան: Վարչական, համակիր, մարզասէր, երէց, երիտասարդ ու փոքրիկ, կը ջանալին տեղաւորուիլ մարզիկներուն շուրջ այս վաւերագրական լուսանկարներուն մէջ յաւերժանալու համար:

Վարձքը կատար ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրէի վարչական անդամներուն, այս տեսակ յաջող մրցաշարք մը կազմակերպելուն համար: Իսկապէս մեծ գնահատանքի արժանի է վարչութիւնը մանաւանդ իր տարած դժուարին աշխատանքին համար, պահելու տղոց եւ աղջիկներու հինգ մնայուն խումբեր:

Այսպիսով 2007-ի եգիպտահայ երեք մրցաշարքերուն յաղթական խումբը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Գահիրէն հանդիսացաւ: Յետետրին մինչեւ Ս. Թէրեզայի մրցաշարքը 9,10 եւ 11 Նոյեմբեր 2007-ին:

Հոս կ'ուզենք աւելցնել թէ այս մրցաշարքին ընթացքին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Վարչութեան անունով, մարզարանի ատենապետ տոթթ. Կարօ Աբգարեան գնահատանքի յուշանուէր մը յանձնեց Գահիրէի ՀԲԸՄ-ի ատենապետ տոթթ. Վիգէն Ճիգմէճեանին, Եգիպտոսի ՀԲԸՄ-ի կայքէջին մէջ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատմութեան եւ լուրերուն պատշաճ եւ ընդարձակ ներկայացման համար:

Սօսի Յակոբեան



ՀԲԸՄ-Ի ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴԱԾ ԿԵՂՈՆԻ ՍԱՆ

ՄԱՐԻԱՄ ՄԱՐՈՒՔԵԱՆ ՄԱԿ-Ի ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՅԹԻ ԳԼԽԱԲՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ



Մարիամ Մարուքեանի գործը ցուցադրուած ՄԱԿ-ի Կեղրոնին այցելուներու մուտքին սրահին մէջ



Մարիամ Մարուքեան այլ մրցանակակիրներու հետ

17 Յոկտեմբեր 2007-ին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) Կեղրոնին մէջ, տեղի ունեցած մրցանակաբաշխութեան հանդիսութեան, ՀԲԸՄ-ի Երեւանի մէջ գործող «Նորքի Հայորդաց Կեղրոն»-ի սան, 13-ամեայ Մարիամ Մարուքեան արժանացաւ ՄԱԿ-ի Տնտեսական եւ Ընկերային Գործերու բաժանմունքին կազմակերպութեանը եւ Հանրային Տեղեկատուական եւ Նամակատարական Վարչութեան Գործակցութեամբ կայացած Մանուկներու Արուեստի Մրցոյթին գլխաւոր մրցանակին:

«Ձնչել Աղքատութիւնը» Միջազգային Օրուայ նշումին առթիւ կազմակերպուած նկարչական մրցոյթին, 60 երկիրներու 12000 մասնակիցներէն ընտրուած վեց լաւագոյններուն գործերը, որոնք լաւապէս կը պատկերեն իրենց յաճնարարուած նիւթը՝ «Մենք Կրնանք Ձնչել Աղքատութիւնը», որպէս ՄԱԿ-ի դրոշմաթուղթ, պիտի թողարկուին 2008 թուականին:

Մարիամ Մարուքեանի գործը ցուցադրուած է նաեւ ՄԱԿ-ի Կեղրոնին այցելուներու մուտքին գտնուող յատուկ ցուցահանդէսին 50 լաւագոյն ցուցոններուն հետ:

Երկու այլ պատանի արուեստագետներ ՀԲԸՄ-ի Երեւանի Նորքի Հայորդաց Տան Կեղրոնէն, Անահիտ Մարտիրոսեան 11 տարեկան եւ Լուսինէ Ներսիսեան 14 տարեկան, արժանա-

ցած են գնահատական վկայականներու: Անոնց գործերը նոյնպէս ցուցադրուած են ՄԱԿ-ի մէջ:

Նշենք որ մրցոյթին 475 գործեր ներկայացուած են Հայաստանէն, որոնցմէ 10-ը յատուկ ուշադրութեան արժանացած են դատական կազմին կողմէ, իսկ 11-ամեայ Էլլադա Խաչատրեանը արժանացած է գնահատական վկայականի:

Հետաքրքրական է մրցոյթի մեկնաբան եւ դատաւոր Թերեզա Ֆասոլինայի պատանիներուն գործերուն մասին ունեցած անդրադարձը: «Միշտ ուշագրաւ, յաճախ սպասուածէն աւելի տաղանդաւոր եւ երբեմն ազգային ոճն ու անհատութիւնը արտայայտող, արուեստի գործերը կը մարմնաւորեն աղքատութիւնը ջնջելու համար աշխարհի փոքրիկներուն ունեցած յոյսերն ու երազները»:

Մրցանակաբաշխութեան հանդիսութիւնը սկսած է ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Բան Կի Մունի ելոյթով, որուն յաջորդած են ծայրահեղ աղքատութեան մէջ ապրող երկիրներու անձնական վկայութիւնները, երաժշտութիւն, «փոքրիկները որպէս ներկայացուցիչներ փոփոխութիւններու» նիւթին շուրջ քննարկում եւ մրցանակաբաշխութիւն:

շաբ. էջ 12



ՀԻՆ ԸԱՅՈՑ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՏԻՐ ԱՍՏՈՒԱԾԸ

Տիր կամ Տիր կոչուած է դպրութեան, պերճախօսութեան, գիտութեան եւ արուեստներու աստուածը հին հայկական դիցարանին մէջ: Ան համարուած է հեթանոս հայերու աստուածներու հօր՝ Արամազդի ատենադպիրն ու սուրհանդակը, մարդոց ճակատագիրը գուշակողն ու երազները մեկնաբանողը, անոնց չար ու բարի գործերը գրանցողը եւ ննջեցեալներու հոգիներուն «անդրշիրիմեան աշխարհ» ուղեկցողը:

Տիրին նուիրուած գլխաւոր տաճարը կոչուած է Երազամոյն: Կ'ենթադրուի թէ այդ տաճարը գտնուած է Չուարթսոնցի տաճարին տեղը:

Տիրին նուիրուած տօնահանդէսը կոչուած է Տիրական: 5-րդ դարու պատմիչ Ագաթանգեղոս Երազամոյնը անուանած է իմաստութեան ուսուցման մեհեան: Զեյլենական դարաշրջանին Տիրը նոյնացուցած են Աբովոն եւ Զերմէս աստուածներուն հետ:

Տիրը ըստ եւութեան եղած է հեթանոս հայերու գրականութեան եւ մասնաւորապէս՝ բանաստեղծութեան աստուածը: «Մոյն» հին հայերէնի մէջ կը նշանակէ սուգուիլ, ընկղմիլ (օրինակ, ջրամոյն - ջուրի մէջ ընկղմած), երազամոյն՝ երազներով տարուած, իսկ երազն ու երազանքը հոգեհարազատ են բոլոր ժամանակներու բանաստեղծներուն:

Հին Զայաստանի մէջ սովորութիւն էր, որ տարին մէկ անգամ Զայաստանի բոլոր կողմերէն բանաստեղծները հաւաքուէին Տիր աստուծոյ Երազամոյն տաճարը, ուր քրմապետը անոնց կու տար գրելու՝ բանաստեղծելու համար որոշակի նիւթ մը եւ մէկ օր ժամանակ: Բանաստեղծները մէկ օր երազամոյն կ'ըլլային, կը յօրինէին որեւէ բանաստեղծութիւն եւ ամենուն ներկայութեան կ'արտասանէին: Լաւագոյն գործերը մրցանակ կը շահէին (ինչպէս որ է այժմ): Յաղթողներուն գլխուն կը դնէին ուռնեկի ոստերէն հիւսուած պսակ եւ զանոնք կ'անուանէին պսակաւոր:

Ինչպէս նշեցինք, Երազամոյն տաճարին մօտ տեղի ունեցող բանաստեղծութիւն արարելու տօնահանդէսը Տիր աստուծոյ անունով կոչուած է Տիրական:

Զայոց հին տոմարի չորրորդ ամիսը Տիր աստուծոյ անունով կոչուած է Տրէ կամ Տրի, ծիածանը՝ Տիրական կամ Տրական գօտի: Զայաստանի մէջ Տրիի անունով ստեղծուած են մի քանի տեղանուններ եւ անձնանուններ, ինչպէս Տիրիակատար (լեռ), Տիրակատար (քաղաք), Տիրառիճ (գիւղ), Տրի (գիւղ) եւ անձնանուններ՝ Տիրան, Տիրատուր, Տիրայր, Տիրիբազ, Տիրոց, Տրդատ...եւայլն:

շար. էջ 11-էն

Յանձնելով Մարութեան եւ Չինաստանէն, Ինտոնեզիայէն եւ Չիմպպապուէն ներկայ միւս չորս գլխաւոր շահողներուն վկայականները, ՄԱԿ-ի օգնական ընդհանուր քարտուղար Ռաշել Մայանճա նշած է, «իրենց գործերով փոքրիկները պարզ եւ դիպուկ ձեւով մեզի ցոյց կու տան, որ աշխարհի վրայէն շնչելու համար աղքատութիւնը, անհրաժեշտ է որ երկիրներն ու ժողովուրդները պայքարին անոր դէմ յաւելեալ համերաշխութեամբ եւ գործակցութեամբ»:



Մարիամ Մարութեանի գործը

Անոր արուեստի փայլուն գործը կը պատկերէ ամեն տարիքի մարդիկ, որոնք միասնաբար հունձքը կը քաղեն իրենց դաշտերէն: Մարիամ հետեւեալ ձեւով կը մեկնաբանէ իր նկարը: «Ես կը մտածեմ, թէ աշխատանքը պիտի օգնէ ժողովուրդին ապրելու լաւ կեանքով: Այդ է պատճառը, որ իմ նկարիս մէջ, ես կը պատկերեմ այգիին մէջ աշխատող ժողովուրդը: Անոնք աշխատած են ծանր եւ իրենց հունձքը առատ է»:

Մարիամ Մարութեանի այցելութիւնը Միացեալ Նահանգներ իր ուսուցչուհիին Ռուզաննա Յակոբեանի հետ կարելի դարձած է ԲԲԸՄ-ի եւ ՄԱԿ-ի մօտ ԶԶ-ի մշտական ներկայացուցչութեան օժանդակութեամբ:

Ծնողագուրկ Մարիամ Մարութեան, որ իր մեծ մօր հետ կը բնակի Երեւանի մօտ, Զայաստանի նոր սերունդին դրական մէկ ձայնն է:

ԿՐԹԱԿԱՆ

Եգիպտահայ ուսանողներու շնորհուած «Օգնող Ձեռք» սիւթական եւ կրթական օժանդակութեան ծիրէն ներս, Գահիրէի ԶԲԸՄ-ը առկայ 44 ուսանողներու կողքին, որոշած է Նոր խնդրարկուններու եւս կրթական օժանդակութիւն շնորհել: Այսպիսով 2007-2008 թուականին այս ծառայութենէն օգտուողներուն թիւը կը հասնի 60-ի:

Նշենք թէ Գահիրէի ԶԲԸՄ-ը Սաթենիկ Ճ. Չագըր Զիմնադրամի միջոցներով կ'օժանդակէ եգիպտահայ վարժարաններու՝ ինչպէս նաեւ եգիպտական պետական եւ մասնաւոր համալսարաններու ուսանողներուն, անոնց յատկացումներ կատարելով կրթաթոշակի եւ ուսումնական այլ ծախսերու համար:

2006-2007 տարեշրջանին, 52 ուսանողներ օգտուած են այս օժանդակութենէն, որուն գումարը հասած է 173.244 Ե.Ո.-ի:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Այծեմսիկի Կարապետ Աբիկեան հանգստեան տան բնակչուհի, Գալուստեան Ազգային Վարժարանի Նախկին բազմավաստակ ուսուցչուհի օր. Էլսի Պէյլերեան, Զելիոպոլսոյ Պուրոս Ղալի փողոցին վրայ գտնուող իր յարկաբաժինը մէջը գտնուող կարասիներով նուիրեց Գահիրէի ԶԲԸՄիութեան, որ համաձայն նուիրատուին փափաքին պիտի ստանձնէ տան եւ անոր պարունակութեան վերաբերեալ կարգադրութիւնները:

Գահիրէի ԶԲԸՄ-ի Վարչութիւնը յատուկ յանձնախումբ մը կազմեց գրանցելու եւ գնահատելու յարկաբաժինին պարունակութիւնը:

Նշենք թէ օր. Էլսի Պէյլերեանը Նախապէս Միութեան նուիրած էր եգիպտահայ համբաւաւոր նկարիչ Երուանդ Տեմիրճեանի (1870-1930) 1900 թուականը կրող մէկ գործը ինչպէս նաեւ անուանի հայ նկարիչ Էտկար Շահինի երեք նկարներ:



ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆՆԵՐ

Գեղանկարիչ Ջամբար Ջամբարեանի գործերն երկու յարգի նկարներ տիկին Ռեյմոնտ Ջամբարձումեան նուիրած է Գահիրեի ԶԲԸՄ-ին:

Չուիցերիոյ Լիւթրի քաղաքը բնակող նկարիչին կինը՝ նկարները յանձնած է Եգիպտոսի ԶԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի փոխ ատենապետ եւ ԶԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի Վարչութեան անդամ՝ տիար Օսնիկ Կարիպեանի:



Տիկին Ռեյմոնտ Ջամբարձումեան նկարները կը յանձնէ տիար Օսնիկ Կարիպեանին

Ան երկու այլ նկարներ եւս յանձնած է տիար Կարիպեանի ուղարկուելու Ջալաստան եւ ցուցադրուելու այդտեղ:

Ջամբար Ջամբարձումեան (1911–1981) ծնած է Աղեքսանդրիա: Յաճախած է Լեոնարտո տա Վինչի գեղարուեստից վարժարանը որուն եռամեայ դասընթացը աւարտած է ոսկեայ մետալով:

Իր գործերուն առաջին ցուցահանդեսը տուած է Աղեքսանդրիոյ մէջ 1947-ին: Ցուցահանդեսներ տուած է նաեւ Ֆլորանսի, Վենետիկի, Բարիզի, Լոզանի եւ այլ եւրոպական քաղաքներու մէջ: Իր գործերը մինչեւ հիմա ցուցադրուած են Գահիրեի, Աղեքսանդրիոյ, Լոզանի եւ Վիեննայի ցուցասրահներուն մէջ, ինչպէս նաեւ մաս կը կազմեն անհատական հաւաքածոներու:

Գահիրեի ԶԲԸՄ-ի Մասնաճիւղը արուեստի գործերու հանդէպ մասնաւոր հետաքրքրութիւն կը ցուցաբերէ եւ կը ծրագրէ եգիպտահայ արուեստագետներու գործերը մնայուն կերպով ցուցադրել իր կեդրոնին մէջ:

* * *

Մեծ նուիրատուութիւն մը եւս կատարուած է Գահիրեի ԶԲԸՄ-ին, եգիպտահայ նկարիչ Սիմոն Շահրիկեանի քրոջ՝ տիկին Սիրվարդ Շահրիկեանի կողմէ, որ վերջերս իր եղբոր գործերն 20 հատը նուիրած է Գահիրեի ԶԲԸՄ-ին:



ԱՆՂԱՄԱԿԱՆ

ՄԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Փափաքելի էր որ «Տեղակատու»-ի «Անդամական» էջը լեցուեր ամուսնութիւններ եւ ծնունդներ աւետող լուրերով ու շնորհաւորանքներով քան մահացածներու գոյժերով եւ ցաւակցականներով: Սակայն ափսոս:

ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի անդամուհիներէն տիկին Նուարդ Աւագեանի ամուսինը Բիւռ Աւագեան իր մահկանացուն կնքեց Երեքշաբթի, 17 Յուլիսին:

Մեր խոր վշտակցութիւնը կը յայտնենք տիկին Նուարդ Աւագեանին եւ իր ընտանեկան բոլոր պարագաներուն:

✂ ✂ ✂

Տխուր ու խոր ապրումներով կ'արձանագրենք մահը ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ անդամներէն Արթօ Աւլանեանի, որ տեղի ունեցաւ Կիրակի, 23 Սեպտեմբերին:

Իր կարճատեւ կեանքին ընթացքին, Արթօն իր հեզութեամբ եւ աշխատասիրութեամբ վայելած էր իր անմիջական շրջանակին սերն ու յարգանքը:

1980-ական թուականներուն ան մաս կազմած է ՀԱԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ պոլի խումբին, եղած է նոյն մարզարանին Սկաուտական Շարժումի ղեկավարներէն եւ գործօն անդամներէն մէկը Երիտասարդական Յանձնախումբին:

Ողբացեալը եղած է նաեւ Կոկանեան Սրահի վարչական անդամ:

Չինք հետզհետէ հիւժող հիւանդութիւնը մօտ 15 տարի հեռու պահեց Արթօն համայնքային կեանքէն, սակայն ան մնաց ու պիտի մնայ մեր յիշողութեան մէջ որպէս մաքուր կենցաղով օրինակելի հայ երիտասարդ մը:

Մեր խոր վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեալ Արթօ-ի տիկնոջ, զաւակին եւ բոլոր հարազատներուն:

✂ ✂ ✂

Յաւով կը գուժենք մահը ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի անդամներէն նկարչուհի Էլիզ Փարթամեանի, որ տեղի ունեցաւ Զինգշաբթի, 23 Օգոստոսին:

Ողբացեալը աշակերտած է եգիպտահայ անուանի նկարիչ Աշոտ Չօրեանի: Մասնակցած է Գահիրէի Սալոնի ցուցահանդէսներուն, 1970-ին Պէյրութի ՀԲԸՄիութեան կազմակերպած Մերձաւոր Արեւելքի հայ նկարիչներու հաւաքական ցուցահանդէսին եւ Եգիպտոսի Մշակոյթի Նախարարութեան կազմակերպած հաւաքական ցուցահանդէսներուն:

Փարթամեան անհատական ցուցահանդէսներ տուած է Հայ Գեղարուեստասիրաց Միութեան եւ Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ:

Ողբացեալը հասարակական գործունէութիւն ունեցած է Հայ Գեղարուեստասիրաց Միութենէն ներս ու երկար տարիներ վարած է Գահիրէի Բարեսիրական Միութեան ատենադպրուհիի պաշտօնը:

«Տեղեկատու»-ն իր խոր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին ամուսնոյն՝ տիար Գրիգոր Փարթամեանին եւ հարազատներուն:





ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Գահիրէ

ՍԱԹԵՆԻԿ Դ. ՉԱԳԸՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ (Առողջապահական Հոգատարութեան Ծրագիր)

Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութիւնը կը տեղեկացնէ Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի հայութեան, թէ Միութեան «Սաթենիկ Դ. Չագըր» Հիմնադրամի Առողջապահական Հոգատարութեան Ծրագիրին 2008 տարեշրջանի անդամագրուիլ փափաքողները պարտին իրենց դիմումագրերը ներկայացնել յատուկ հարցաթերթիկներու վրայ 1 Նոյեմբերէն մինչեւ 4 Դեկտեմբեր 2007.

ԳԱՀԻՐԷԻ մէջ

15, Էմատ Էլ Տին փողոց, Ա. յարկ Հեռ. 25931555

Ուրբաթ օրերը առաւօտեան ժամը 10-էն յ.մ. ժամը 3

ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ Կեդրոնը

26, Մուրատ Բէկ փողոց – Հելիոպոլիս Հեռ. 22916444 - 24151127

Առաւօտեան ժամը 10-էն յ.մ. 3, բացի Կիրակի եւ արձակուրդի օրերէն:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Գրասենեակը

19, Օմար Լոթֆի փողոց - Ա. յարկ

Կամաա-ի (Համալսարանի) կայարան Հեռ. 5920469

Երկուշաբթիէն Հինգշաբթի յ.մ. ժամը 6-9

ԾԱՆՕԹ.- Ա) Նոր դիմումագրերուն համար կը խնդրուի ներկայացնել ինքնութեան թուղթին պատճէնը, 2 նկար եւ հայ համայնքին պատկանելու փաստաթուղթ:

Բ) Նորոգութեան համար դիմողներէն կը խնդրուի ներկայացնել 1 նկար եւ 2007-ի ծրագիրին մասնակցութեան քարտին պատճէնը: Առողջապահական Հոգատարութեան Ծրագիրին բարեփոխեալ կանոնագրութիւնը ստանալէ յետոյ, վճարել Ե. Ո. 180 մասնակցութեան սակը:

ՀԲԸՄ-ը ինքզինքին կը վերապահէ, բոլոր կարգի դիմումներուն ընդունումը կամ մերժումը:

ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

